

Հ | Հ

Լ. ԶԱՅՉՈՒՄԻ

# ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ՖԱԲՐԻԿԱՆ

ԵԿԱԴԻԿՈՒԹՅՈՒՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ՊՈՏՈՆՈՎԱՅԻՆ  
Ակադեմիա Խոհ  
СССР

„ԳԻԳԱՆՏ“ ՍՈՎԵՏՈՂԻ ՄԱՍԻՆ

631. 14.  
9 - 22

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵՆԵՐՈՒ. ՀՐԱՄԱՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ  
Մասկան ————— Փաստ-Դաճ

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼՈՅԱ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱԶԱՌՎՈՒՄ ԵՆ

1. Ա. Անդրեյս.—Սոցիալիստական շինարարության նոր ետապը 6 հ.
2. Կուրչեյլո.՝Կուլակը կոլխոզի թշնամի . . . . . 5 հ.
3. Դրադատնահանական կոմունալի կամոնադրություն . . . . . 2 հ.
4. Սաաին.՝Պատասխան ընկեր կոլխոզնիկներին . . . . . 5 հ.
5. Ա. Դիգօյան.՝Կոլխոզների մասին . . . . . 6 հ.
6. Վ. Խվանօվ.՝Նոր եռապում . . . . . 5 հ.
7. Դրադատնահանական արտելի կամոնադրություն . . . . . 2 հ.
8. Կողջ աշխատանքը կոլխոզում . . . . . 8 հ.
9. Ա. Անդրեյեվ.՝Հյուս, Կովկ. պատվանդնեսության սոցվերակա ռուցման խնդիրները . . . . . 2 հ.
10. Կալեին.՝Ինչպես կազմակերպել և վարել կաթնառնտեսությունը կոլխոզներում . . . . . 8 հ.
11. Ա. Անդր.՝Սոցիալիստական շինարարության դուռում . . . . . 8 հ.
12. Հյուս, Կով. Յերկը.՝Ժիախոտագործական միության դիմումը . . . . . 2 հ.
13. ՀԿ(ը)Կ էենտիումի աշխատանքը (ընկ Վորոշիլովի զեկուցումը) 15 հ.
14. Ա. Հովհաննիսական.՝յերդ մարտական փորձի (բանասեղծությունները) . . . . . 20 հ.
15. Հյուս, Կով. յերկրային 6 կուսկոնֆերենցիայի բանաձները . . . . . 8 հ.
16. Զարգացրեք կենցանարուժությունը կոլխոզներում . . . . . 15 հ.
17. Ցեղազարդենի կուլառուան Հ. Կ. . . . . 6 հ.
18. Միկուլա.՝Դեպի նոր կենցաղը կոլխոզներում . . . . . 5 հ.
19. Ակամորոխով.՝Պաշտպանեցեք անասուններին վարակումից . . . . . 5 հ.
20. Գուգովսկի.՝Առաջին ողնություն հիվանդացած զյուզ. կեն գանիններին . . . . . 6 հ.
21. Հնդամյակի յերրուզ տարվա շեմքին . . . . . 10 հ.
22. Դյուզամանահանական միասնական հարկը և գ. ա. ոսց. վերա կառուցումը . . . . . 10 հ.
23. Օտ. Ֆելինվ.՝Ինչպես կազմակերպել խոշոր կոլխոզի տնահ սությունը և նրա վարչությունը, լին պրու . . . . . 8 հ.
24. Նույնը, 2-րդ պրակ . . . . . 4 հ.
25. Նույնը 3-րդ պրակ . . . . . 7 հ.
26. Ա. Դ. Բաստանյան.՝Անասություն ծական կոլխոզի և նրա մասնաճյուղերի կառավարումը . . . . . 20 հ.

## ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ՖԱԲՐԻԿԱՆ

(ՈՉԵՐԿՆԵՐ ԳԻԳԱՆՏ ՍՈՎԻԿՈԶԻ ՄԱՍԻՆ)

ՀԱՅԱՀՈՏԻԿ  
ԻՆՍՏԻՏՈՒ  
ՏՈՒՆՈՒՋԵՆԻ  
Ակադեմիա Նաւ  
СССР

Թարգմ. Հ. Ա.

66-722352

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՅԱՀԱՏԻԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱ

1951 թ.

ՈՂՈՍՈՎ-ԴՈՆ

ЧАЩАРИН

# ФАБРИКА ЗЕРНА

Очерк о совхозе „Гигант“



56655-66

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР  
МОСКВА  
РОСТОВ

Ростов н-д Крайлит № АЗ-8 заказ № 1048 Газетно книжн. тип.  
СККПО тираж 1500

## „ԳԻՒԳԱՆՏԻ“ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԱՄՐՈՑՆ Ե

«Գիգանտ» հացահատիկային սովորովը, վորը դանվում է Սալսկի շրջանում, իր գոյության առաջին տարում մեծ հաջողություններ ձեռք բերեց:

Մեքենայական բարձր տեխնիկան սովորով, նրա բանվորների և մասնագետների հեղափոխական վերելքը, տվին հայի կրկնակի բերք «Գիգանտում»:

Յեկ միայն զրանում չե աշխարհի խոշորագոյն հացահատիկային անտեսության ուժը և հզորությունը:

«Գիգանտը» լավագույն որինակ ե, թե ինչպես լենինյան կուսակցության ղեկավարությամբ, պրոլետարական քաղաքի ոգնությամբ, անապատային ստեպներում կառուցվում ե խոշոր մեքենայական տնտեսություն, ծավալուն ֆրոնտով ընթանում և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը:

«Գիգանտը» գործնական դպրոց ե խոշոր կոլխոզներ կառուցելու համար: Հազարավոր գյուղացիներ այցելելով սովորով, այժմ համատարած կոլեկտիվացման մարտիկների առաջավոր շարքերում են ընթանում:

Ընդգրկելով իր ոժանդակությամբ հարևան գյուղերի և ստանիցաների տաճայակ կոլխոզները, հանդիսանալով գյուղատնտեսական հզոր կոմբինատի կենտրոն, «Գիգանտը» ոգնում ե շրջակայքի չքավորներին և միջակներին՝ վերջնականապես և կարծ ժամանակամիջոցում, համատարած կոլեկտիվացման հիման վրա վերացնել կուլակությանը վորպես դասակարգի, հասնել համայնական տնտեսությունների զարգացման մեջ չեխնված հաջողությունների:

«Գիգանտը» մի տարում հերքեց դժվարություններից սարսափած աջ սակավահավատների և արտնջացողների բոլոր մարդարեռթյունները:

Կապիտալիստական բազմաթիվ յերկրներից բանվրական պատգամավորությունները այցելելով «Գիգանտը», հպարտանում են սովորողի նվաճումներով և յերդվում են կատարել ամեն ինչ սոցիալիզմի մոտեցող հաղթանակի համար ամբողջ աշխարհում:

## ՎՐԱՏԵՂ Ե ԸՆԿԱԾ ՀԱՅԱՍՏԻԿԱՅԻՆ ՓԱԲՐԻԿԱՆ

«Գիգանտ» հացահատիկային սովխողը գտնվում է Հյուսնակասի Սալսկի շրջանի հյուսիս-արևեմտյան մասում, Արևմտյան-Զիաբուծական ուայոնում:

Սովխողի հողային տարածությունը ձգվում է հյուսիսից հարավ 72 կիլոմետր յերկարությամբ և մոտ 43 կիլոմետր լայնությամբ: Հյուսիսային մասում նրա հողերը հպատական մասում՝ մասում—բուդյոնու և ֆրուզեալի անվան ծիագործարաններին, հարավում—մերձենում են գյուղացիական հողերին և արեմտյան մասում—պետական № 16 հացահատիկային սովխողին, կողեկանիվ տնտեսություններին և գյուղացիական մասը հողամասերին են սահմանակցվում:

Այն վայրերում, վորտեղ ընկած ե սովխողը, հողերը միատեսակ չեն: Հյուսիսային մասում կա հարավային սևահող, մերձազովյան սևահողերի հետ խառնված: Մերձ-մանիչյան ուայոնում գերակշռում են աղոտ հողեր (սօլոնք):

Տարեկան մթնոլորտային տեղումների (անձրև, ձյուն) միջին քանակությունը հավասար է 400 միլիմետրի: Տարեկան միջին շերմությունը հավասար է 9,4 աստիճանի: Դարնանը և ամռանը հաճախ արեկյան և հարավ-արեկյան քամիներ են փշում, այսպես կոչված՝ «չորային», վորոնք բարձրացնում են դաշտային մանր փոշու ամպեր: Դարնանային ցանքի ժամանակ այդ բամբիները շատ վտանգավոր են ու արագորեն չորացնում են հողը: Ցանքերի համելու ժամանակ, խիստ շոգերի դեպքում այդ բամբիները պատճառ են դառնում ցանքերի չորանալուն:

Դարնան գեմը ձորակներում հավաքվում էն ձյան և անձ-

րեային ջրեր, մի քանիսում խոնավությունը պահպանվում է մինչև աշուն, իսկ մյուսներում ամռանը շուտ չորանում է:

Սովխողի չհերկած հողերի բուսականությունը դաշտային ե՝ չոր, վայրի վարսակ, բարձմենուկի, խրտցակ և այլ հասարակ ու վայրի խոտերով ծածկված գետին:

Սովխողի հողերով անցնում է Ռոստով—Սալսկ—Ստալինգրադ յերկաթուղային ճանապարհը: Ռոստովից մինչև Ցելինա կայարանը, «Գիգանտի» առաջին բազան համելու համար հարկավոր և միայն հինգ ժամ:

## ՈՎ ԵՐ ԱԹԱՋ ՍՅԴԻ ՀՈՂԵՐԻ ՏԵՐԸ

Իհարկե, վոչ հողերի վորակը, վոչ չորային քամիները իսկական պատճառներ չեյին, վոր այդ հողերը մնացել եյին անմշակ: Պատճառների արմատն այլ եր:

Այդ հողերը մի ժամանակ պատկանում եյին Դոնի կազակության զինվորական մարզի գանձարանին: այնուհետև զնեցին ձիաբույծ-կալվածատերերը և նրանք այդ հողերի կատարյալ տերն եյին: Նրանք վոչ մի հաշիվ չունեյին այդ հողերը հերկելու: Կալվածատերերն ունեյին ձիյերի անհամար յերամկներ, իրենց դաշտային կալվածքները և հարստանում եյին ցարական բանակին ձիյեր մատակարարելու: Նախկին տերերի տիրապետությունը բավական հեռու յեր տարածվում այժմյան սովխողի հողերից: Նրանք մի տեսակ իշխաններ եյին ստեղների միջև:

Նրանք շատ եյին—Սուլթան Հիրեյ, Փիշվանով, Նազարով, Ժերեբցով, Կորալկով և ուրիշ շատ մանր, բայց արագորեն հարստացող կուլակներ, վորոնք դառնում եյին ազնվական-կալվածատերեր: Առանձնապես հարուստ եր Կորալկովը, վորը համարվում եր խոշորագույն ձիաբույծներից մեկը հարավ-արեւելքում:

Այդ հարուստների փառահեղ կյանքի մասին կարելի յեղափառ կազմել այն զտած իրերից, վորոնք նրանք կորցրել են ճանապարհին, յերբ կարմիր բանակից վախել են արտասահման: Այսպես որինակ, մի անգամ, իշխան Տրուբեցիու կալվածքի մոտ, խամ հողը վարեկս, տրակտորիստ-դեկավար Մաքսիմենկոն անսպասելիորեն հողի միջից գտավ մի յերկաթե ար-

կըդ, վորի մեջ կար 500 հազար սուբլու ցարական թղթադրամ և ավանդապահական (վելացած) գրքույլներ:

Հենց միայն այս գտածով կարելի յէ գաղափար կազմել թէ վորքան հարուստ եյին չթագաղրված դաշտային արքաները:

## Ի՞ՆՉՊԵՍ ԿԱԶՄՎԵՑ ՍՈՎԼԽՈԶԸ

Դեռ վոչ այնքան ուշ, 1923 թվին «Յելինա» կիսակայարանը իրենից ներկայացնում եր մի կղզի, կորած վայրի վարսակով ծածկված հարթության մեջ: Ամենուրեք ձգվում եյին անվերջ տափաստանները:

Երկաթուղագծից հեռու, կիսավեր կալվածքներում սկըզբում տեղափորկեցին կոմունաները և կոլխոզները: Այստեղ գնում եր նոր շինարարություն: Տափաստանն առաջին անգամ մեքենա տեսավ:

Ժամանակը դժվարին եր. տափաստանն ել չեր կամենում առանց պայքարի անձնատուր լինել: Խամ հողը պահանջում եր ուժեղ ու դիմացկուն մեքենաներ և մշակման մեծ փորձառություն: Մարդիկ աշխատում եյին առանց հիասթափվելու, արյունաթախ մազոլներով նվաճելով խամ հողի ամեն մի թիզը: Կոմունաների պայքարը հողերի հետ դժվարին եր, բայց մարդիկ համառորեն շարունակում եյին իրենց գործը:

Կոլխոզնիկները շուտով ոգնություն ստացան: Խորհրդային կառավարությունը ազատ հողերի վրա, կոլխոզների մոտ կազմակերպեց պետական № 5 սովլխոզը: Այդ սովլխոզի սկզբնական նպատակներն եյին—բազմացնել փոչխար և անասուն, ապահովել գյուղացիական տնտեսությունները սերմնային մատերիալի, կուլտուր-ցուցադրական կերպով մշակել հողերը և ընդարձակել ցանքերի տարածությունը պետական հողերի վրա:

Բայց սովլխոզն այդ ժամանակ չուներ հարկ յեղած ուժեղ մեքենաներ: Հողի մշակման նախնական ձևերը դարձան անպետք, իսկ հողերը նոր տերերից պահանջում եյին անտեսության մեքենայացում:

— Պատրաստվում են մեզ սովորեցնել իսկ իրենց անտեսությունը չեն կարողանում յոլա տանել—սկսեցին չարամտորեն փսփսալ կուլակները, մատնանշելով սովլխոզի պակասությունները:

Բայց յերբ սովլխոզն ամրապնդվեց, ձեռք բերեց գյուղատնտեսական մեքենաներ, ապա վոչ միայն չքավորները և միջակները, այլ և կոմունաները սկսեցին սովորել սովլխոզից, թե ինչպես պետք ե կուլտուրապես մշակել դաշտերը:

№ 5 սովլխոզը ցանեց համեմատաբար վոչ այնքան մեծ հողամաս, 10 հազար հեկտարից մի քիչ ավելի: Մնացած տարածությունը զբաղված եր վորպես արոտատեղ անասունների համար: Ցանքի համար պետքական սովլխոզի հողերի այսպիսի ոգտագործումը ձեռնտու չեր պետության: Պետք եր ամբողջ այդ տասնյակ հազարավոր հեկտար հողերը հացահատիկային կուլտուրաների ցանքսի հատկացներ:

Դա ավելի քան անհրաժեշտ դարձավ, յերբ 1928 թվի գտրնանից մեր յերկիրը առանձնապես սուր կերպով սկսեց հացի դժվարություններ զգալ: Զքավորա-միջակային անհատական տնտեսությունները, չնայած վոր ամրապնդվեցին խորհրդային իշխանության որոք, չկարողացան լիովին բավարարել հացի պահանջը: Իսկ կուլակը ամեն միջոցներով աշխատում եր վիճեցնել հացի մթերությունները:

Խորհրդային կառավարությունը վորոշեց կարճ ժամանակամիջոցում բարձրացնել հացահատիկային տնտեսություններ՝ հացահատիկային խոշոր սովլխոզներ կազմակերպելով և մանր, սակավ յեկամտարեր, անհատական գյուղացիական տնտեսությունները կոլեկտիվացման յենթարկելով:

Այս տեղը, վորտեղ գտնվում եր № 5 սովլխոզը, ձանաչվեց հարմար խոշոր հացահատիկային տնտեսություն ստեղծելու համար:

Վոչ մի անհատական տնտեսություն չեր կարող արագորեն յուրացնել այդ հարյուր հազարավոր հեկտար խամ հողերը: Դրա համար պահանջվում են շատ տրակտորներ և այլ բարդ մեքենաներ: Անհատական տնտեսությունները, ունենալով բոլորովին վոչ բարդ մեքենաներ, չեյին կարող տասնյակ տարիների ընթացքում կատարել այն, ինչ վոր կանի տրակտորը, իրեն կցվող մեքենաներով:

Այդ պատճառով վորոշեց № 5 սովլխոզից անասունը քշել մի ուրիշ տեղ, բերել այնտեղ գյուղատնտեսական լավագույն մեքենաներ և մեկ տափաստանում կազմակերպել հացի հզոր ֆաբրիկա, խորհրդային հացահատիկային տնտեսություն:

## ԵՌԱՋԻՆ ՀԱՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Գիգանտ» հացահատիկային տնտեսությունը արագ կազմվեց:

Սովորողի ծագման և գործնեյության սկիզբը համարվում է 1928 թվի հունիսի վերջերը:

Սովորողին հանձնարարված եր—ցանել 10,000 հեկտար աշնանացան և 50 հազար հեկտար ցել անել:

Այս աշխատանքը «Գիգանտը» լիովին կատարեց: Ցանկեց չ500 հեկտար հաճար և 4040 հեկտար աշնանացան ցորեն: ցանձնարարումը գերակատարվեց 1540 հեկտարով: Գարնանաշանի համար ցելիք միայն 48,500 հեկտար. թերակատարումը առաջ յեկալ անձրեային յեղանակների և ուշ վարի պատճռով:

Առաջին սեզոնում, հունիսի վերջերից աշխատանքներին մասնակցում եյին 190 տրակտորներ, իսկ սեպտեմբերի սկզբներից—300 տրակտորներ: Աշխատանքն ընթանում եր յերկու հերթի:

Սրանք նոր ծնվող սովորողի առաջին հաջողություններն եյին:

Հունիսին արագ կերպով կազմակերպվեցին տրակտորիստների կուրսեր, վորոնք կարճ ժամանակամիջոցում բաց թողին 300 հոգի, պատրաստելով նրանցից միանդամայն փորձված տրակտորիստներ, իսկ Յ50 հոգի հավաքվեցին զանազան տեղերից, վորոնք առաջ աշխատում եյին ուրիշ սովորողներում:

1928 թվի ձմեռը աշխատում եյին վերապատրաստման կուրսեր, վորոնք, ին տրակտորիստների հետ միասին 600 տրակտորիստներ վերապատրաստեցին:

Ի՞նչու սովորող կոչված ե «Գիգանտ» (այսինքն շատ մեծ):

Վորովինեաւ ամբողջ աշխարհում չկա իր տարածությամբ այդպիսի հսկայական հացահատիկային տնտեսություն: Նույնիսկ այնպիսի յերկրում, ինչպիսին Ամերիկան ե, վորը մասնակի կերպով մեզ տրակտորներ և գյուղատնտեսական այլ մեքենաներ ե մատակարարում—նման տնտեսություն չի ունեցել և չունի:

Այժմ «Գիգանտի» աշխատանքներին են հետևում վոչ մի-

այն Խորհրդային Միության և ամբողջ աշխարհի աշխատավորությունը, այլ և մեզ թշնամի բուրժուական պետությունները: Համաշխարհային բուրժուազիան տարակուսանքի մեջ ե, թե եղ վնաս ե, վոր արդյունաբերական տեսակետից յետամնաց մի յերկիր, ինչպիսին ե Խորհրդային Խուսաստանը, կարողացավ այդպիսի խոշոր տնտեսություն կազմակերպել:

«Գիգանտը» խորհրդային հրաշք են կոչում նրա համար, վոր նա աճեց և ամրապնդվեց միմիայն մի գյուղատնտեսական սեզոնում, այսինքն մի ամառվա ընթացքում և դարձավ իսկական գիգանտ—հսկա:

Նա այժմ ամբողջ Խորհրդային Միության պարծանքն և և նրա հաջողությունների մասին գիտե ամբողջ աշխարհ:

## Ի՞ՆՉՊԵՍ Ե ԿԱՌԵՎԱՐՎՈՒՄ ՍՈՎԼԽՈԶԸ

«Գիգանտի» տերը խորհրդային պետությունն ե:

Սովորողի գուկը կանգնած ե կառավարիչը (գիրեկտոր): Նրան ողնում են կառավարչության մեխանիկական, արտադրական և վարչական մասերը, վորոնք ղեկավարվում են կառավարչի տեղականներով:

Մեխանիկական, արտադրական և վարչական մասերը ճյուղավորվում են:

Արտադրական մասը բաժանվում է ժամանակավոր գյուղատնտեսական հողամասերի, վորոնց ղեկավարում են հողամասերի վարիչները—գյուղատնտեսները: Ամեն մի հողամասը բաժանված է 2—3 տրակտորային բրիգադների, բրիգադիների և դաշտաբույծների գլխավորությամբ: Արտադրական մասը բացի դրանից, ունի նաև տեսուչ—գյուղատնտեսներ, գյուղատնտեսներներում գյուղատնտես—մետեղորողներ (վորոնք ուսումնասիրում են յեղանակը):

Մեխանիկական մասը ընդգրկում է ավտոգարաժը և վերանորոգման արհեստանոցները, վորոնք բրիգադներում ունեն շարժական արհեստանոցներ: Մեխանիկական մասին կից կան շրջիկ տեսուչ—մեխանիկներ, վորոնք հարկ յեղած ղեպքում այցելում են բրիգադային վերանորոգման արհեստանոցները:

Վարչական մասում կենտրոնացված են—քարտուղարությունը, վոչ մեխանիկական փոխադրիչ ուժերը (գուժեվոյ

տրանսպորտ), բժշկական սպասարկումը, հաշվապահությունը, տնտեսական բաժինը և բրիգադային հաշվառման գրասենյակները:

Սովխոզի վարչական ամբողջ սիստեմը մշտապես կապված է արտադրական ստորին բջիջների՝ տրակտորային բրիգադաների հետ:

## ՍՈՎԽՈԶԻ ԳՐԱԴՐԱՆՑ

Ինչպիսի տնտեսություն ունի «Գիգանտը»:

Սովխոզի հողային ընդհանուր տարածությունը հավասար է 170,000 հեկտարի (1700 քառակուսի կիլոմետր):

Տրակտոր սովխոզում համարվում է գլխավոր մեքենան:

Տրակտորն ամեն ինչ է: Տրակտորը կցվածքային մասերով վարում է, տափանում, ցանում, հնձում, պատրաստի հացահատիկը փոխադրում ելեվատոր և կատարում է ուրիշ աշխատանքներ: Տրակտորը՝ սովխոզի գլխավոր ուժն է:

1929 թվի գարնանը, ցանքի ժամանակ «Գիգանտում» հաշվում եր մոտ 650 հատ զանազան սիստեմի տրակտորներ:

Սալսկի տափաստանների պայմաններին ամենահարմար և պետքականը համարվում են «Ինտերնացիոնալ» և «Կատերպիլլեր» սիստեմի տրակտորները: Վերջին սիստեմի տրակտորներն ավելի ընդունելի յեն, վորովհետև «Կատերպիլլեր» ունի վորդնածե ընթացք, ուժեղ է, 60 ձիու ուժանոց, հարմար է և զեկավարելն ել հասարակ:

1930 թվի գարնանացանի ժամանակ տրակտորների թիվը իջավ մինչև 300-ի, բայց նրանց ընդհանուր հողորություն 12 հազար ձիու ուժից աճեց մինչ 20 հազար ձիու ուժի:

Սակավաղոր տրակտորները, նույնպես և մաշված հին մեքենաները փոխարինված են 175 հատ «Կատերպիլլեր» տրակտորներով:

1929 թվի աշնանացանի կամպանիայի վերջում սովխոզում կային հետևյալ գյուղատնտեսական մեքենաները և գործիքները. — 187 հատ 3 կորպուսանոց գութաններ, 248 հատ 4 կորպուսանոց գութաններ, 214 հատ գիսկավոր փոցիներ, 1114 հատ ատամավոր «Լինա» փոցիներ, 1587 հատ «Զիւ-Զագ» տա-

փաններ, 71 հատ կուլտիվատորներ, 256 տրակտորային շարքացան, 190 խուրձակապ մեքենա, 31 կալիչ, 25 կոմբայն, 12 հատ «Նեյզառուզ» սիստեմի ախտահանիչ մեքենա, 18 հատ մարդագատար ավտոմոբիլ, 42 հատ բեռնակիր ավտոմոբիլներ, 97 դաշտային փոքրիկ վագոններ, 24 հետենյան վրաններ և 17 հատ վագոն-արհեստանոցներ:

Այս բոլոր մեքենանների արտադրողականությունը հսկայական է: Որինակ, 15/30 ուժանոց «Ինտերնացիոնալ» տրակտորը 3 կորպուսանոց փոցինով 8 ժամում հերկում է միջին հաշվով 2 և կես հեկտար: Ամեն մի գութանին ամբողջ սեղոնում ընկնում է 128 հեկտար վար: «Կատերպիլլեր» տրակտորը, հինգ շարքանի ցանիչներով ընդգրկում է 20 մետր տարածություն և մի որում ցանում է 240 հեկտար:

Յեթե վերցնենք «Գիգանտի» բոլոր 256 հատ դիսկավոր շարքացանները և դասավորենք կողք-կողքի, ապա ամբողջ յերկարությունը հավասար կլինի մի կլիոմետրի:

Սա—զյուղատնտեսական մեքենանների և զործիքների կարճ թվարկումն է: Ամեն մի սեղոնում սովխոզը աճում է և լրացվում նոր և նոր մեքենաններով:

Հրաշքներից մեկը սովխոզում դա կոմբայնն է:

Կոմբայնը—կոմբինացիայի յենթարկված հնձող և կալսող մեքենա յե: Նրան քաշում է մի ուժեղ տրակտոր: Կոմբայնը հնձում է արտը, հնձված հասկերը կոնվեյերը քաշում է և տակս բարաբանի տակը, վորը և նրանց կալսում ե հենց գնացած ժամանակ: Շղթայած ելեվատորը քաշում է ամբողջ ծղոտըն և տալիս ծղոտածեծիչ մասը: Առանձին ամաններով հատիկը ընկնում է հավաքման սեղանին, քամու յե արվում, աղբը և ծղոտը քամահար է լինում, իսկ հատիկը տրվում է տեսակավորման ցիլինդրին: Յեթե վորոշ հասկեր չեն կալսվում, մեքենան նրանց յետ և վերադարձնում մի հատուկ բարաբանի մեջ, վորը ծղեծում և դուրս է հանում ամբողջ հատիկը:

Յերբ մաքրված և մաղված հատիկը թափվում է առանձին արկղի մեջ, կոմբայնին մոտենում են բեռնակիր ավտոմոբիլները, կամ հատուկ պլատֆորմաներ ունեցող տրակտորներ. կոմբայնի արկղները մեքենայորեն բացվում են և մաքուր հատիկը թափվում է ավտոյի, կամ տրակտորի պլատֆորմայի մեջ: Հացահատիկը այդտեղից անմիջապես տեղափոխվում է 30—40

և մարդատար ավտոմոբիլների համար, հրդեհաշեջ դեպոն և վերջապես, մատակարարման ընդարձակ պահեստը՝ մերձակայի յերկաթուղագծերով, ներքնահարկերով, մարադներով, սառցարաններով։

Բնակարանների դիմաց պարտեզ և տնկված, իսկ ավանի յեղբին տնկված ե այդի, ծառերի ջերմանոց և սարքավորված ե սպորտի հրապարակ։

Տրուբեցկոյ կիսակայարանում սկսվել է յերկաթուղային կայարանի կառուցումը, վորը կոչվելու յե «Գիգանտ»։

Ելեկատորի մոտը կառուցված են պահեստի համար 5 յերկաթուղագծեր իրենց փակուղիներով։ Այս տարի մերձեցող գրձերը ավելանալու յեն։

Ամբողջ ավանը ելեկատորի կացիայի յե յենթարկված։

1930 թվի աշնանը ավանում պատրաստ կինի բանվորական համալսարանի շենքը։ Սովորողի բանվորների համար համալսարանն արդեն բացված ե, բայց գտնվում ե ժամանակավոր շենքում։

## ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՆՍՊԱՐՀՆԵՐԸ

Նախ քան վորևե բան կառուցելը ամերիկացիք սկզբում ավ ճանապարհներ են անցկացնում դեպի կառուցման վայրը, իսկ հետո սկսում են բերել շնանյութերը։

Այս դրությունը «Գիգանտ» սովորողում հաշվի յե առնը ված։

Մարդկանց հետ կենդանի կապ պահելու և դաշտերից նյութեղենը, հացահատիկը արագորեն դեպի ելեկատորները տեղափոխելու համար և վերջապես աշխատանքների հսկողության և կառավարման համար—անհրաժեշտ են լավ ճանապարհներ։

Սովորող մեծ ուշադրություն է դարձել և դարձնում ե ճանապարհաշխարարությանը։ Տրուբեցկոյ կիսակայանից յերկաթուղագիծ անցկացնել մինչև «Աշխատավոր ձի» բազան։ Կա յերկու նախադիմ։ Մեկով առաջարկվում է զիծն անցկացնել ջելինա կայարանից մինչև «Աշխատավոր ձին», ապա յեռանկյունաձև անցկացնել յերկրորդ զիծը մինչև զիսավոր բազան—Տրուբեցկոյ կիսակայանը։ Մյուս նախագծով առաջարկվում է 45 կիլոմետր յերկարությամբ մի զիծ անցկացնել Տրուբեցկոյից մինչև «Աշխատավոր ձին»։ Նման յերկաթուղագիծ անցկացնելու զեպօւմ «Գիգանտը» կիսայի զգալի գումարներ և վերջնականորեն կկարգավորի հաղորդակցության գործը։

Գանակ» ամբողջ տարածությունը կտրաված է սայլի փոքր ճանապարհներով, վորոնք ընկած են հողամասերի միջև, բայց ամբողջովին դեռ սարքավորված չեն։ Այդ միջանկյալ ճանապարհները քառակուսիաձև հողամասերի սահմաններն են։ Քառակուսու ամեն մի կողմը յերկարությամբ յերկու վերստ և Քառակուսու տարածությունը 400 հեկտար ե, կամ 4 քառակուսի վերստ։

Բոլոր հողամասերը քառակուսիների վերածելը սովորողում շատ կարևոր է։ Դաշտերից հեռու գտնվող մարդիկ, նայելով սովորողի տարածության քարտեղը, իսկույն և յեթ, քառակուսու համարի համաձայն, գտնում են այս կամ այն հողամասը։ Առանձնապես դա անհրաժեշտ է բերքահավաքման կամպանիայի ժամանակ, յերբ կուլտուրաները միաժամանակ չեն հասնում։

Պետք ե ասել, վոր այնպիսի խոշոր տնտեսության համար, ինչպիսին ե «Գիգանտը», ճանապարհների միջոցները դեռ կատարելագործված չեն և աղքատ են։

Բրիգադներին մատակարակելը և հացահատիկը դաշտերից դեպի ելեկատորներ տեղափոխելը համեմատաբար թանգ ե նստում սովորողին։ Հողամասերի հեռավորությունը յերկաթուղագծից թանգացնում է արտադրանքի ինքնարժեքը։ Ծանր մեքենաները հաճախ փշանում են, արագորեն մաշվում, կլանում են խոշոր չափով վառելանյութ, պահանջվում է ճանապարհների մշտական նորոգում։

Այժմ սովորողի վարչության առաջ հարց ե կանգնել — գիսավոր բազայից, Տրուբեցկոյ կիսակայանից յերկաթուղագիծ անցկացնել մինչև «Աշխատավոր ձի» բազան։ Կա յերկու նախադիմ։ Մեկով առաջարկվում է զիծն անցկացնել ջելինա կայարանից մինչև «Աշխատավոր ձին», ապա յեռանկյունաձև անցկացնել յերկրորդ զիծը մինչև զիսավոր բազան—Տրուբեցկոյ կիսակայանը։ Մյուս նախագծով առաջարկվում է 45 կիլոմետր յերկարությամբ մի զիծ անցկացնել Տրուբեցկոյից մինչև «Աշխատավոր ձին»։ Նման յերկաթուղագիծ անցկացնելու զեպօւմ «Գիգանտը» կիսայի զգալի գումարներ և վերջնականորեն կկարգավորի հաղորդակցության գործը։

Այդ զեպօւմ բերքահավաքման ժամանակ ավտոմեքենաները և տրակտորները պլատֆորմաներով մոտենալով կոմբայ-

Ներին և ընդունելով նրանցից հացահատիկը, իսկույն և յետ կդատարկեն յերկաթուղային վագոնները:

Ներկայումս գլխավոր բազայից դեպի տափաստանը անց  
ե կացված հեռախոսային ցանց, վորը սպասարկում է բոլոր  
բանվորական ավանները, աշխատավայրերը, խուռացրները և բրի-  
գադները:

Մեկ - յերկու տարուց հետո «Գիգանտ» հացահատիկային ֆաբրիկան անձանաչելի կդառնա:

# ՀՐԱԵՒՆԱՐԱՒԹՅՈՒՆ

Ամառը չորսային քամիները մանր փոշի յեն բերում կալ-  
միկական տափաստաններից։ Շիկացած ողը այրում ե բուսա-  
կանությունը, հողը ճեղքվածքներ ե տալիս և այս ամենը սով-  
խողի տնտեսությանը և զրջակա կոլխոզներին ահապին վնաս  
ե հասցնում։

Այդ կործանիչը քամիների դիմաց «Գիգանտը» ձեռք եւ աշուել մի շաբաթ կանխիչ միջոցներ։

Սովորող ամբողջ տարածության վրա ներկայումս կա 20 լճակ, 10 պլատին, 15 համարակ ջրհոր, փորվում են մի քանի նորերը և մի քանի վայրերում ուսումնասիրությունն ե կատարվում արտեզյան ջրհորներ փորելու տեղ գտնելու համար։ Կազմակերպված ե ջերմանոց արհեստական ծառատնկման համար։ Ծառատնկման մի մասը կատարված է 1929 թվի գարնանը Այս տարի (1930 թ.) սկսվելու յե ծառատնկման ամեն մի քառակուսու միջև և առաջին հերթին արելյան մասերում, վորոնք (ծառերը) մի տեսակ պահպանող պատ են դառնալու արևելյան քամիներից։

Այսպիսով ամեն մի քառակուսին շրջապատվելու յե ծառերի շղթայով։ Սովորով ամբողջ տարածությունը պատվելու յեխտ, կանաչ ծառուղիներով։

Հետապայում սովորով մտադիր ե ավելի լայն ծավալել ջրաշինարարական աշխատանքները—ձորակներով անցկացնելով վոռոգման ջրանցքներ և նրանց ափերին տնկել անտառներ:

## ՍՈՎՀԵՈԶԻ ԲԱՆՎՈՐԵԿԱՆ ԿԾԴՐԵՐԸ

Սովորողն իր բանկորական ուժը վերցնում է գլխավորապես բատրակներից։ Անզրագետ, մոռացված բատրակից սովորող գարբնում և միանգամայն գրագետ և վորակյալ արդյունաբերական բանկոր։

Այդպիսի մեծ տնտեսության մեջ, ինչպիսին «Գիգանտն» ե, մշտական շտաբը մեծ չե:

Առ 1-ը հոկտեմբերի 1929 թ. շտատավոր բանվորների և ծառայողների թիվը հասնում էր 991 հոգու։ Այս թվի մեջ եյին մտնում բոլոր մեքենավարները, բրիգադիրները իրենց ոգնականներով, հողամասերի, պահեստների, բազաների վարիչները, հաշվապահները, հրշեջները, վարչությունը, շոփերների մի մասը, փականագործները և սեագործ բանվորները։

Գարնանային աշխատանքների ժամանակ բանվորների թիվը հասնում է մոտ 3000-ի, իսկ բերքի հավաքման ժամանակ բանվորների թիվը հասնում է մինչև 6600-ի։ Տրակտորների թիվը ևս հասնում է մինչև 1200 հոգու։

Սեղոնային աշխատանքների տաք ժամանակը սկսվում է հուլիսի վերջերից:

Սովորութիւնը բանվորները մեծամասնությամբ անցել են կյանքի դաժան դպրոցը, կըել են կալվածատիրական և կուլակային ճնշումը, կըել են իրենց վրա անտանելի շահագործում։ Նրանք բոլորը չքավորների և բատրակների զավակներ են, իրենք ևս յեղել են բատրակներ։ Կուլակների համար որական աշխատել են 18 ժամ, յեղել են լծկան անասունի դրության մեջ։

Տրակտորիստների մեջ քիչ չեն նախկին՝ անապաստներ, միջակ կանայք: «Գիդանտը» նրանց սովորեցրել ե տրակտորային գործը: Ամեն տարի սովորողին կից կազմակերպվում են տրակտորային հատուկ կուրսեր: Այդ կուրսերում սովորում են հարյուրավոր նոր բարերակներ և չքավորներ և դառնում են վորակյալ բանվորներ գոտոպատճեսնության մեջ:

Ժամանակակից զյուղատնտեսական բանվորի կվալիֆիկացիան պահանջում է յերբեմն ավելի բարձր գիտություն, քան քաղաքի ձեռնարկների բանվորներից, վորտեղ մեքենան մի վայրումն է աշխատում։ Գյուղատնտեսական մեքենաները գրա-



նվում են մշտական տեղափոխման, շարժման մեջ, այդ պատճառով բանվորից պահանջում են հաստուկ խնամք և ուշադրություն դեպի իրենց, պահանջում են մեծ պատրաստականություն և նախաձեռնություն: «Գիգանտ» սովորողի բանվորները մեծամասնությամբ արդեն սովորել են խնամել բարդ շարժակա և մեքենաներին, կարողանում են վոչ միայն նորոգել նրանց, այլև կանխել փչացումները և լիովին բավարարում են այն պահանջներին, վորոնք ներկայացվում են նրանց:

Այս ամենը վերաբերվում է «Գիգանտի» բանվորական ուժի հիմնական կորիզին: Ամառային աշխատանքների ժամանակ խուտորներից և գյուղերից սովորող են գալիս սեղոննիկները:

Ո՞վեր են այդ սեղոննիկները:

Սեղոննիկենը Դոնի, Սալսկի, Կուբանի գյուղերի և ստանիցաների չքավոր բնակչությունն ե, վորոնք չունենալով իրենց տնտեսության մեջ բավականաչափ աշխատանք, ստիպված են փնտրել այն քաղաքներում, կամ իրենց գյուղում կուլակների և ունետրների մոտ, կամ թե սովորողներում:

Յեթե չքավորը կամ բատրակը, մի անգամ ազատվելով կուլակային ճանկերից, ընկնում ե սովորող, ապա նա այլևս չի վերադառնում ու կուլակի լծի տակ մտնում: Նա աշխատում է վորքան կարելի յե շուտ ստանալ կվալիֆիկացիա և ընդմիշտ մնալ սովորողում:

Ի՞նչն ե այդքան ձգում չքավորին դեպի սովորող:

Նախ և առաջ որենքով հաստատված նորմալ բանվորական որը, կուլտուրթական սպասարկումը, նորմալ սնունդը, բնակարանը, բժշկական ոգնությունը և, վոր գլխավորն ե՝ գիտակցությունը, վոր աշխատում ես վոչ թե կուլակային գրպանի համար, այլ խորհրդային պետական տնտեսության մեջ:

Պահպանելով աշխատանքային դիսցիպլինան և բարեխրդանորեն մոտենալով դեպի իրենց պարտականությունները, «Գիգանտի» բանվորները ակտիվորեն մասնակցում են սովորողի շնորարությանը: Նրանք դնում են իրենց հարցերը արտադրական խորհրդակցությանը և արժեքավոր առաջարկություններ են անում արտադրությունը լավացնելու համար:

Սովորող հանդիսանալով սոցիալիստական աշխատանքի

ցայտուն պատկերը գյուղատնտեսության մեջ, միևնույն ժամանակ աշխատանք ե տալիս հազարավոր բատրակների և չքավորների:

## Դ Ա Ճ Տ Ո Ւ Մ

Ամեն մի բրիգադը մի ձեռնարկ է, ընկած հեռու տափաստանում: Բրիգադան կապում ե իր աշխատանքը սովորողի ամբողջ աշխատանքի հետ և մեր յերկրի ամբողջ աշխատավորների հետ միասին ստեղծում ե սոցիալիստական գործ: Դաշտի մեջ տեղում, հերկած հողում կանոնած են տաս—տասնհինգ փոքրիկ վագոններ, վրաններ, մեքենաներ,—դա բրիգադի իջևանն ե:

Ամեն մի բրիգադում միջին հաշվով գտնվում ե 200 աշխատող 40 տրակտորով, 30 դիսկավոր տափաններով և 18 տրակտորային շարքացաններով:

Բացի այդ՝ կա դարբնոց, նորոգման արհեստանոց, գրասենյակ, «Կոմունար» կոոպերատիվային կրպակ և խոհանոց:

Զիյերը ոգտագործվում են միայն հեծներու համար. նրանց վրա հեծած ամբողջ որը զես ու դեն են գնում դաշտաբույծները և աշխատանքներին հետևող վերակացուները:

Իջևանում տիրում ե տրակտորների մշտական ժիոր—մի քանիսը գնում են հերկի, մյուսներին քաշում են դեպի արհեստանոց նորոգելու, մի քանիսին փորձում են, Վագոն-արհեստանոցի մոտ, ատամնավոր լայն անիմսերի միջև վողջ որը շրջում են յուղուված մարդիկ, մտնում են տրակտորների փորի տակ մաքրում են, պտուտակում:

Ծխում ե շարժական խոհանոցը: Մթերքներն ամեն որ բերվում են բազայից թարմ: Ճաշի զանգը տալիս վագոններից դուրս ե գալիս բանվորների հանգստացող հերթը, Կերակուրը սննդալի յե. Նախաճաշին ստանում են բորշչ, կամ փորեկ սառ բան թեյով, ճաշին տալիս են յուղալի շչի մսով և յերկրորդը գրեշնեկի կաշա կամ մսով գետանախնձոր, ընթրիքին տալիս են ճաշի տեսակներից ըստ ցանկության: Գիշեր-ցերեկ կա յեռացրած ջուր:

Բրիգադներում աշխատանքը ընթանում ե յերկու հերթի, 8-ական ժամ: Մի հերթին աշխատում ե մյուսը հանգստանում: Բայց աշխատանքի յեռուն ժամանակ սահմանված ժամերը հաշ-

սև յերախում, խուլ մռնչյունով սողում են շարքով փայլուն աստղերը... Դա յերկրորդ հերթի բանվորներն են աշխատում, պատուելով գիշերվա խավարը տրակտորների ելեկտրական լապտերով:

## ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՅՈՒԹՅՈՒՆԸ

Վորքան յեկամտավոր ե ընդարձակ տնտեսությունը, այնքան լավ ե դրված այդ տնտեսության մեջ աշխատողների կուլտուրից այլային սպասարկման գործը: «Դիգանտ» սովորողի բանվորները այդ համանում են և յերբ նրանցից պահանջում են աշխատանքի վորակ, աշխատանքի բարձր նորմաներ և ուշադիր վերաբերմունք դեպի ինվենտարը, նրանք իրազործում են այդ գիտակցաբար:

Բերքահավաքման ժամանակ աշխատանքը սովորողում առանձնապես լարված ե ընթանում: Գլխավոր բազաներից աշխատանքի վայրերն են սողում տրակտորները, քաշելով իրենց յետնից հսկայական կոմբայնները, հնձող մեքենաները, խուրձակապերը կալսիչները: Բոլոր բրիգադները մարտական պատրաստության են բերվում: Դաշտաբույժները և գյուղատնտեսները հայտնում են, վոր այսինչ դաշտամասերը հասել են, անհրաժեշտ ե առանց հետաձգելու հնձել: Վարչությունը տեղերն ե ուղարկում տեսուչ-գյուղատնտեսների և բանվորների:

Դաշտամասերը լցվում են բանվորներով: Մարդկանց մի ամբողջ բանակ սպասում ե հրամանի: Ցեղ ահա տրվում ե հրաման—

— Սկսել աշխատանքը:

Բրիգադները իրար սոցիալիստական մրցման են հրավիրում:

Խնչ արդյունքներ ե տվել սոցմրցումը:

Յերրորդ բրիգադան լավ վորակի քննություն տվեց: Աշխատանքի արտադրողականության ուղղությամբ ամենքից առաջ եյին ընթանում 11, 9 և 5-րդ բրիգադները: Վառելիքի և թելի դդալի խնայողություն տվեցին 5-րդ և 9-րդ բրիգադները: 5, 7 և 9-րդ բրիգադները բերքատվության ուղղությամբ առաջավոր տեղ բռնեցին: Կալման ասպարիզում ամենից առաջ եյին ընթանում 3-րդ և 14-րդ բրիգադները: Կոմբայնների

միջև ևս սոցիալիստական մրցում եր ընթանում, առաջնությունը ստացավ բրիգադիր Սմիշիանի խմբակը:

Ամեն մի բրիգադին վարչությունը հատկացրել եր 350 ռուբլի, սոցիալիստական մրցմանը լավ մասնակցություն ցույց տալու համար:

Բոլոր մրցումների մեջ առաջին տեղը բռնեցին 5-րդ և 9-րդ բրիգադները:

Բրիգադի անունով ստացված բոլոր պրեմիաներից—բացի անհատական պրեմիաներից, ինչպես որինակ, ժամացույց, կտորեղին հագուստի համար՝ առանձին տրակտորավարներին և փականագործներին—բանվորները հրաժարվեցին և բրիգադային պրեմիաների բոլոր գումարները հանձնեցին կուտ-կենցաղային աշխատանքների բարեկավմանը:

Սոցիալիստական մրցմանը մասնակցում եյին բառիս բռն իմաստով սովորողի բոլոր բանվորները: Նրանք միայն կենդանի բանվորական ուժ չեն, այլ ամեն ինչի մեջ յերևան են բերում իրենց նախաձեռնությունը: Շարքային տրակտորիստները արժեքավոր առաջարկություններ են մտցնում արտասահմանյան մեքենաները կատարելագործելու ուղղությամբ, վորով վառելանյութի մեծ խնայողություն են տալիս և կրճատում են դադարները (պրոստոյ): Այս բոլոր մանրունքները մի հայցքից չնչին են յերեսում, բայց այդ մանրունքներից խոշոր խնայողություններ են ստացվում:

Բանվոր վլասենկոն տեխնիկական մասին ե հանձնել կտարեկագործված կոմբայնի իր նախագիծը: Մի ուրիշ բանվոր, Սուշկովը, «Կենտրակ» տրակտորի համար մի մաս ե հնարել վորը շատ բանով գերազանցում ե արտասահմանյան նույնանման հին մասնիկից: Բոլոր այսպիսի ոգտավետ առաջարկությունները տեխնիկական բաժնում կացնում կյանքի մեջ:

## ԱՃԽԱՏԱԿԱՆ ՀԱՃՎԱՌՈՒՄԸ ՅԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Խնչպես ե ընթանում աշխատանքի հաշվառման հսկողությունը և վարձատրությունը սովորողում:

Ամեն մի բանվորի տրվում ե վորոշակի առաջադրանք, վորի էրագործմանը հետեւում ե բրիգադիրը կամ դաշտաբույժը. այնուհետև աշխատած ժամերի թիվը անց ե կացվում բանվորի

հաշվառման քարտի մեջ։ Հաշվառման քարտերից բըիգաղային գրասենյակները արդյունքներն անց են կացնում իրենց բանվորական մատյանը, վորով, համաձայն աշխատանքի տեսակի դնահատականի, կազմում են փարձատրման ցուցակներ։

Այսպիսի սիստեմը պարզ է և հարմար նրանով, վոր ամեն մի բանվոր կարող է իր աշխատածը հաշվել և ստանալ իր հաշվառման քարտով, վորը հաստատվում է բըիգաղիրի կողմից։

Միջին տրակտորիստի ամսական աշխատավարձը սահմանված է 5-րդ կարգով 48 ռուբլի։ Աշխատանքի յեռուն ժամանակ վարձը բարձրանում է մինչև 80 ռուբլի։ Մի քանի բարձր վորակ տրակտորավարներ աշխատում են ամսական մինչև 130 ռուբլի։

Ցածը կվալիֆիկացիա ունեցող բանվորները (դեկ վարողները և մեքենա յուղողները) ստանում են 4-րդ կարգով, ամսական 40 ռուբլի, բայց բերքահավաքման կամպանիայի ժամանակ նրանց աշխատավարձը բարձրանում է մինչև 50 ռուբլի ամսական և ավելի բարձր։ Այդ նույն կարգով են ստանում բըիգաղներում ստորին սպասարկող պերսոնալը—լվացարարուհիները, խոհարարուհիները, աղախինները և ձիապահները։ Բերքահավաքման կամպանիայի ժամանակ սեղոնով աշխատող բանվորների որավարձը համուռմ է մինչև 4 ռուբլու։

Գործարքային (սղենի) աշխատանքը, վորը մտցված է սովորողի բոլոր բանվորների համար, հնարավորություն ե տալիս զգալի չափով բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, գերակատարել նորմաները և առաջադրանքները։

Ընդհանուր հաշվով ամսական ամեն մի բանվորից պահում են 15 ռուբլի ուտեստի համար, վորը որական ստացվում է 50 կոպեկ։

Սովորող սեղոնային և այլ աշխատանքի յե ընդունում հիմնականում բատրտկ-չքավոր բնակչությանը և յերբ բըիգաղներում իմանում են, վոր նրանց միջն կան կուլակներ կամ ունեղուներ, այդպիսիներին անմիջապես հեռացնում են աշխատանքից։

## Ի՞նչՊԵՍ Ե ԱՃԽԱՏՈՒՄ , ,ԳԻԴԱՆՏԼ“

1929 թվին գարնանացանի կամպանիան սկսվեց ապրիլի 12-ին։

Սովորողի ամբողջ տարածությունը բաժանված եր 6 մասի, իսկ մարդկանց և մեքենաներին—14 բըիգաղի։ Բերքին հարմարուեն հետեւելու համար հողերի ամբողջ տարածությունը բաժանված եր 314 վանդակի, ամեն մեկը 400 հեկտար տարածությամբ։

Առաջին որերը յեղանակները նպաստում եյին աշխատանքներին, բայց հետո փչեցին հյուսիսային քամիներ, ձյուն յեկավ, բարձրացավ բուք։ Դաշտերը մեկնած բըիգաղները թեթև եյին հագնված, ապրում եյին վրաններում, սառում եյին։ Մերքենաները և մարդիկ թաղված եյին ձյան մեջ։ Ամբողջ սեղոնի ընթացքում դրանք ամենածանր որերն եյին։ Յոթն որ բըիգաղները չեյին աշխատում։

Վերջապես յերևաց արեւ, յեղանակը կանոնավորվեց, մարդիկ շունչ առան և անցան հերկի։

Ինն որվա ընթացքում բըիգաղները կատարեցին ԽՍՀՄ-ում դեռ չեղած աշխատանք։ Ցանկեց 48,500 հեկտար տարածություն։

Աշխատում եյին 1200 տրակտորավարներ և 1700 հոգի ևս մեքենաներին կցվող գործիքների վրա։ Աշխատանքը կատարվում եր յերկու հերթի։

Կարճ ժամանակից հետո ծլած արտերը ուրախացրին սովորողներին և համոզեցին, վոր ցանքը կատարված ե բավական հաջող։

Գարնանը, ցանքից հետո, հողը շատ խոնավություն ուներ, վորը բավականացավ մինչև հունիսի սկզբները։ այնուհետև յեկան վարար անձրևներ, վորոնք և վճռող հանդիսացան ցանքերի հետագա աճման համար։

Ցանքի և բերքի հավաքման ժամանակամիջոցում բըիգաղները հերկեցին 28,110 հեկտար ցել, վորի 75 տոկոսը խամ հող եր։

Հուլիսի 12-ից սկսվեց բերքի հավաքումը։ Հունձը վերջացավ ոգոստոսի 8-ին։ մինչև վերջանալը սկսվել եր նաև կալը, վորը վերջացավ սեպտեմբերի 1-ին։

Բերքահավաքման կամպանիայի ընթացքում «Գիգանտ»-ի դաշտերում աշխատում եյին հետեւյալ մեքենաները. 374 հատ տրակտորներ, 25 կոմբայններ, 190 հնձող և խուրձ կապող մեքենաներ, 31 կալսիչ, 259 սայլ հացահատիկ և 170 սայլ խուրձ կրելու համար:

Աշխատում եյին 6800 բանվորներ, վորոնցից 800 հոգի տրակտորավարներ:

## Բ Ե Ր Փ Ը

Բերքը «Գիգանտում» միջակից բարձր եր. միջին թվով հեկտարին գալիս եր 54 փութ:

7500 հեկտար աշնանացան հաճարից ստացվեց մոտ 470 հազար փութ բերք, 4040 հեկտար աշնանացան ցորենից—260 հազար փութ, 39314 հեկտար գարնանացան (կոշտ) ցորենից ստացվեց 2 միլիոն 300 հազար փութ, իսկ գարնանացան (փափուկ) 4127 հեկտարից—20 հազար փութ. 5019 հեկտար այլ կուլտուրաներից, դարի, վարսակ, կորեկ և այլն ստացվեց ավելի քան 50 հազար բերք:

60 հազար ցանքատարածությունից «Գիգանտն» ընդամենը ստացավ 3 միլիոն 200 հազար փութ զանազան տեսակի հացահատիկ: Այստեղ պետք է ուշադրության առնել այն հանգամանքը, վոր սովորողի հացահատիկը իր չորությամբ բարձր վորակի յեր. նորմայով թույլատրվում ե հացահատիկի մեջ 14 տոկոս խոնավություն, իսկ սովորողի հացահատիկը ունի 9 տոկոս խոնավություն: Սրանից ստացված հացահատիկի քաշն անպայման պակասեց: Պետությանը հանձնելիս ամեն մի փութը գնահատվեց ավելի թանգ:

## Բ Ե Ր Փ Ի Վ Ո Ր Ը Կ Ը

Ամբողջ ցանքը դեռ չնձած գյուղատնտեսական ստուգման յենթարկեց տեսակավորությունը սահմանելու համար: Ստուգումից հետո 50,000 հեկտարը ճանաչվեց վորպես տեսակավոր (տեսակավորի մաքրությունը հասնում եր 80-ից 100 տոկոսի) և միայն 10,000 հեկտարը ճանաչվեց վորպես շարքային ցանք:

Ստուգման շնորհիվ տեսակավոր ցանքերի հացահատիկի

փթի արժեքը զգալի չափով բարձրացավ: Սովորողի հացահատիկը, բացի բարձր տեսակավոր մաքրությունից, տարբերվում է նաև բարձր նատուրայով և պակաս աղտոտությամբ. իսկ այս բոլոր վորակները բարձրացրին նրա արժեքն ու գինը:

Այսպիսով ամբողջ տեսակավոր հացահատիկը, մոտ 3 միլիոն փութ քանակությամբ, վորը ստացվել եր «Գիգանտի» դաշտերից, ամբողջովին գործածվելու յե վորպես սերմացու կոլտողների համար: Դա մեր խոշոր նվաճումներից մեկն ե ուժեղ կերպով կնպաստի մեր գյուղատնտեսության հացահատիկի բերքատվության բարձրացմանը:

## ,,ԳԻԳԱՆՏԻ“ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Յերբ սովորողը հաշվառքի յենթարկեց, թե վորքան ե ծախսված հերկի, հողի պատրաստման և ցանքի վրա, մի խոսքով, բոլոր աշխատանքների վրա, բացի հունձից և կալից, ապա պարզվեց, վոր շահավետությունը բավարար եւ:

Դիմավոր կուլտուրաների վերաբերմամբ մի հեկտարի ծախսը արտահայտվեց հետեւյալ թվերով (հաշվելով բոլոր ծախսները).—

ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ	ՎՐՈՐ ՏԵՍԱԿԻ	ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ (ՀԵԿՏԱՐՈՎ)	ՄԻ ՀԵԿՏԱՐԻ ՎՐԱ ԱՐՎԱԾ ԾԱԽԱԾ	ՄԻ ՀԵԿՏԱՐԻ ԿԱՊ
Աշնանացան վարսակ	Պետկուսկայա	6927	26	98
» ցորեն .	Կոպերատորկա	2493	47	98
» .	Բանատկա	1413	42	03
Գարնանացան ցորեն	Գարնովկա	16334	36	71
» .	Մելանոպուս	22990	39	63
» .	Ալբիդում	4187	34	05

Սովորողի հաշվառքի համաձայն, զուտ շահը հավասար ե 1 և կես միլիոն ռուբլու: «Գիգանտի» ամբողջ բերքը հաշվում ե 5 միլիոն ռուբլի: Մի փութ հացահատիկի ինքնարժեքը սովորվելին նստում ե մոտ 90 կոտեկ:

Նաբերական ձեռնարկների կառուցումը, ինչպիսին են՝ աղորիք, յուղապահրագործարան, ձիթագործարան, բեկոնի և այլ ֆաբրիկաներ:

Կոմբինատն ունի մոտ կես միլիոն հեկտար հող, 60 հազ. գլուխ խոշոր յեղյուրավոր անասուն, մոտ 120 հազար վոչչիար, 100 հազար ընտանի թռչուն, 7 հազար խող և մեծ քանակությամբ մեռած ու կենդանի ինվենտար:

Վոչ մի սաժեն հող կոմբինատում չի մնալու առանց ոգտագործման: Ամեն մի կտոր հողը, մշակվելով մեքենայով, տալու յե ամենաբարձր յեկամուտ:

## ԽՆՉՊԵՍ Ե ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ԳՅՈՒՂԱՅԻՌԱՅԻԹՅՈՒՆԸ

### ԴԵՊԻ ՍՈՎԼԽՈԶԸ

ՅԵՐԵ «Գիգանտը» գյուղացիության չքավոր, միջակ խավերի համար հանդիսանում ե խսկական ողնական կոլեկտիվացման գործում, ապա կուլակների համար նա աչքի փուշ ե: Յեզ նրանք, կուլակները, արշավանք սկսեցին սովխոզի դեմ:

Սկզբում կուլակները զանազան բամբասանքներ բաց թողացին սովխոզի հասցեյին, բայց նրանց չեյին հավատում վոչ չքավորները, վոչ միջակները:

Կուլակները բացահայտորեն վախենում եյին հանդես գալ. բայց յեղան մի քանի դեպքեր, յերբ նրանց ազգականները խցկվելով սովխոզ վորպես բեռնակիրներ, ճանապարհին մտնում եյին խուտոր կուլակների մոտ և տեսակավոր հացահատիկի պարկերը փոխում եյին գյուղացիական հացահատիկի հետ: Հացահատիկը հանձնելու ժամանակ այս արարմունքը հայտնաբերվեց և մեղավորները պատասխանատվություն կրեցին:

Կուլակները փորձեր արեցին այլ ճանապարհներով մասսել սովխոզին: Հափշտակում եյին դաշտում թողած սերմացուն, չքավորությանը ևս համոզում եյին այդ քայլին անելու, բայց այստեղ ևս նրանց մերկացրեցին և պատասխանատվության յենթարկվեցին:

Մածկելով իրենց թշնամությունը, կուլակները սկսեցին իրենց մասսատու արշավանքը առաջ տանել ծածկված եյին տատակեներով:

և վարձկանները յերկաթի կտորներ եյին գցում կոմբայնների մեջ, խուրձերի մեջ հաստ փայտեր եյին խոթում, վորով ժամանակավորապես դադարեցնում եյին բարդ և թանգարժեք մեքենաները: Փորձում եյին ագիտացիա մղել բանվորների մեջ, թե իբր քիչ են վարձատրում, վատ են կերակրում և կոչ եյին անում գործադուլի: Ցեղել են նաև դեպքեր, յերբ վառում եյին սովխոզի ցանքերը:

Վորոշ անգրագետ և քիչ գիտակից սեզոնային բանվորներ բերքահավաքման կամպանիայի ժամանակ մի անգամ թողեցին աշխատանքը, բայց յերբ իմացան, թե վորտեղից ե գալիս ագիտացիան, անմիջապես գիտակցության յեկան և մերկացրին փսփողներին, պահանջելով հեռացնել նրանց աշխատանքից: Այսպիսով կուլակային բոլոր վորոգայթները, մասսելու սոցիալստական տնտեսությանը—պարտություն կրեցին:

Ի՞նչպես են վերաբերվում դեպի սովխոզը աշխատավոր չքավոր-միջակ գյուղացիները:

Ամառը շրջակա խուտորներից և գյուղերից հազարավոր գյուղացիներ ձգտում են դեպի «Գիգանտ» և այնտեղ աշխատանք են գտնում:

Աշխատելով սովխոզում, նրանք դիտում են բարդ, մեքենայացված տնտեսությունը, սովորում են նոր ձեռվ աշխատել, ձեռք են բերում խոշոր փորձ և գիտություն, իսկ վերադառնալով իրենց հայրենի գյուղը, դադարեցնում են իրենց անհատական տնտեսությունը և անցնում են կովխոզ:

Սովխոզի հողերին կից գտնվող կը արականացի խուտորը դիտելով «Գիգանտի» աշխատանքները, ամբողջովին մտավ կոլխոզ:

— Մենք ապրում եյինք վայրենիների նման, այսուհետեւ այսպես ապրել չի կարելի—վորոշեցին անհատականները:

Յեզ իսկապես, այն հողերը, վորոնք մշակվում եյին անհատականների կողմից, ամբողջովին ծածկված եյին տատակեներով:

Կատարելով յեռուն աշխատանք, սովխոզը կարողացավ ոժամդակություն ցույց տալ շրջապատի բնակչությանը: 1928 թ. աշնանը Յեղորլինսկի ստանիցայի ռայոնում կովխոզների և անհատականների համար հերկված է 2500 հեկտար, իսկ 1929

թ. գարնանը Յելինա կայարանի ռայոնում սովխողին հաջող-  
վեց հերկել 1200 հեկտար կոլեկտիվների համար:

Ներկայումս սովխողին կից կազմակերպված ե մեքենա-  
տրակտորային կայան, վորը 1930 թ, գարնանից կոլեկտիվների  
համար մշակելու յե 10000 հեկտար:

### „ԳԻԳԱՆՏԸ“ ԿՈԼԵԿՏԻՎԱՅՄԱՆ ԴՊՐՈՅ Ե

Ներկա ժամանակներում, յերբ ամբողջ գյուղեր վեր են  
ածվում համատարած կոլխոզների, ամեն մի գյուղացի պետք  
ե ձգտի իմանալու մեքենայի կառուցվածքը, կարողանա նրանց  
վրա աշխատել, սարքել նրանց: Նա պետք ե իմանա կառուցել  
խոշոր համայնական տնտեսություններ և կարգավորել աշխա-  
տանքը նրանցում:

Վորտեգ, ում մոտ նա կարող ե սովորել այս արվեստին:  
Պատասխանը մեկ ե — սովխողներում և հին խոշոր կոլխոզ-  
ներում:

Ամոթ ե նույնիսկ ապրել սովխողին կից: Տզզում ենք  
ինչպես մոծակները փղի շուրջը: Սեփական տնտեսության վրա  
մարդ նայել չի ուզում: Լավ ե աչքից հեռանալ — հայտարարեց  
զրույցի ժամանակ «Դոնեցկի ունմոնտ» գյուղատնտեսական  
ընկերության անդամներից մեկը: Այդ ընկերությունը գտնվում  
է «Գիգանտի» գլխավոր բազային կից: այդ ընկերությանը հող  
ե հատկացվելու Մանիչի մյուս ավին:

— Այստեղ նոր կյանք կսկսենք և կսովորենք «Գիգանտից»:

1929 թվին սովխողն այցելել են ավելի քան 5000 եքս-  
կուրսանտներ թե խմբերով և թե անհատապես: Խորհրդային  
Միության բոլոր ծայրերից գալիս են «Գիգանտի» աշխատանք-  
ները դիտելու և սովորելու՝ կոլխոզիկներ, գյուղատնտեսներ,  
կուլտուրնիկ-գյուղացիներ, բանվորներ և նույնիսկ արտասահ-  
մանյան պատգամավորությունները պատեհ մոմենտը բաց չեն  
թողնում այցելելու խորհրդային հրաշքը:

Ստորև բերում ենք Դոնեցկի շրջանի Վեշենսկի ռայոնի  
Անդրօնովո խուտորի գյուղացի եքսկուրսանտների կարծիքը,  
«Գիգանտը» դիտելուց հետո:

— Դյութված ենք աշխատանքի թափով և մեքենաների  
արտագրողականությամբ: Անցնելով դաշտերի մոտով, մենք

տեսանք, վոր մոտ 10 հեկտար հողամասում նոր եյին սկսվել  
աշխատանքները: Մենք կարծեցինք, վոր աշխատանքը կբավի  
ամբողջ որվա համար: Մեկ յերկու ժամից հետո, յետ վերա-  
դառնալիս մենք նկատեցինք, վոր ամբողջ հողամասը հերկված  
ե և տրակտորների հետք անգամ չկար, նրանք անցել եյին ու-  
րիշ հողամաս:

Ոյժմ մեր միաքը գբաղված ե մի բանով. յերբ վերադառ-  
նանք տուն, ինչ ել վոր լինի նման աշխատանք մտցնելու յենք  
մեր խուտորում: Մենք հաստատ հավատացած ենք, վոր մոտ  
ապագայում մեր մտադրությունը կիրագործվի և մեր դաշտե-  
րը նույն կերպ կմշակվեն ինչպես, «Գիգանտում»: Մենք խոսք  
ենք տալիս — ամեն կերպ աջակցել խորհրդային իշխանությա-  
նը մեր գյուղերի կոլեկտիվացումը և մեքենայացումը իրագոր-  
ծելու համար:

Ցել սրանք դատարկ խոսքեր չեն, այլ իսկական իրակա-  
նություն: Խորհրդային յերկիրը ապրում ե մեծ բեկում: Գյու-  
ղատնտեսությունը վերակազմվում և վերակառուցվում ե սո-  
ցիալիստականորեն: Զքավորները և միջակները կոմունիստա-  
կան կուսակցության ղեկավարությամբ Հյուսիսային Կովկա-  
սում անց են կացնում համատարած կոլեկտիվացումը:

«Գիգանտին» այցելել են տասնյակ բանվորական պատ-  
գամավորություններ կապիտալիստական զանազան յերկրներից:  
Նրանք դյութված եյին սովխողի նվաճումներով, համոզվում  
եյին, վոր միայն խորհրդային իշխանության որոք հնարավոր  
ե այդպիսի շինարարություն և խոստանում եյին իրենց հայ-  
րենիքում ամեն կերպ ոժանդակել համաշխարհային հեղափո-  
խության արագացմանը:

### ՊԵՇՔ ԵՆ ԱՐԴՅՈՒ ՍՈՎԻՆՈԶՆԵՐ

Վորպեսզի պարզ լինի, թե ինչու կառավարությունը այդ-  
պիսի խոշոր հայտնատիկային ֆարբիկաներ ե կառուցում, ան-  
հրաժեշտ ե մի քանի խոսք ասել հին սովխողների և նրանց  
նշանակության մասին:

Առաջին սովխողներն առաջ յեկան 1920 թվին, նախկին  
կալվածատերների հողերում: Այն ժամանակ սովխողների խըն-  
դիրների մեջ եր մտնում, բացի գյուղատնտեսական մթերք-

ների աւտադրությունից, նաև գյուղացիական տնտեսությունների ազգուկուլտուրական սպասարկում, նրանց արտադրական ոգնություն ցույց տալ տեսակավոր սերմերով, ազնվացեղ անասուններով, փորձնական-ցուցադրական դաշտերով և ամառային աշխատանքի ժամանակ սակավազոր տնտեսություններին գյուղատնտեսական մեքենաներով:

Առաջին սովորողներն իրենց ծավալով խոշոր չեյին, քիչ մեքենաներ ունեյին, այդ պատճառով նրանք շատ հաճախ վընաս եյին բերում: Սովորողները պահանջում եյին կապիտալների խոշոր ներդրում բնակարանների, գյուղատնտեսական ինվենտարի ձեռք բերման և այլ կարիքների համար: Բայց հողի սակավության պատճառով նրանք իրենց չեյին արդարացնում, կատարելագործված մեջենաները լրիվ կերպով չեյին ոգտագործվում:

Այսպիսի դրության մեջ եյին սովորողները հեղափոխության առաջին տարիներում, յերբ արդյունաբերությունը դեռ չեր ամրապնդվել, յերբ գյուղատնտեսությունը բոլորովին դեռ վերականգնված չեր:

Մի քանի տարուց հետո, կուսակցության ճիշտ քաղաքականության շնորհիվ, սոցիալիստական արդյունաբերությունը անցավ մինչպատերազմյան չափից:

Բայց մանրացած գյուղատնտեսությունը, հիմնված մասնավոր սեփականության վրա, իր զարգացման ընթացքում շատ յետ մնաց արդյունաբերությունից: Գյուղը չէ արողացավ շուկանետել քաղաքի համար հարկ յեղած քանակությամբ գյուղատնտեսական հումույթ և պարեն:

Կոմունիստական կուսակցությունը հետեւելով լենինի ավանդներին, անցել ե գյուղատնտեսության հիմնական վերակառուցմանը սոցիալիստական ուղիով:

Այդ վերակառուցման ուղին մեկ ե — համախմբել խոշոր կովիզողների մեջ անհատական տնտեսություններին՝ չքավորներին և միջակներին, փոխարինելով այդ կովիզողներով նաև կուրրին տնտեսություններին, վերացնելով կուլակությանը լակային տնտեսություններին, կառուցել խոշոր, մեքենայացված խորվոր գասակարգի և կառուցել խոշոր, մեքենայացված խորվոր հըրդային տնտեսություններ:

Ապրանքային հացահատիկի քանակության կրծատումը

յերկրում ստիպեց կառավարությանը առաջին հերթին անցնել տնտեսության հացահատիկային ճյուղի բարձրացմանը:

Անցկացնելով այնպիսի միջոցառություններ, վորոնցով հնարավոր ե ընդարձակել ցանքերի տարածությունը գյուղերում, բարձրացնել բերքատվությունը, կողեկտիվացման յենթարկել գյուղացիությանը, միաժամանակ ձեռնարկվեց հացահատիկային սովորողների համար ոգտագործել ազատ հողերը, մանավանդ ԽՍՀՄ-ի չորային ռայոններում:

Սյոդիսի հողեր գտնվեցին մոտ 17 միլիոն հեկտար — Միջն Վոլգայում Ներքին Վոլգայում, Հ.-Կովկասում, Ուրալում, Սիբիրում, կազակստանում, Ուկրաինայում, Ղրիմում, Հեռավոր-Սրբելքում և յերկրի այլ վայրերում:

Հացահատիկային ֆաբրիկա-սովորողների կազմակերպումը պետությունը հանձնեց Զերնոտրեստին:

1929 թվին ամբողջ Միության մեջ կազմակերպվեցին 44 հացահատիկային սովորողներ 1 միլիոն 654 հազար հեկտար տարածությամբ: 1930 թ. կազմակերպվելու եյին ևս 66 հացահատիկային նոր սովորողներ, վորոնք կբռնեն 2 միլիոն 611 հազար հեկտար տարածություն:

1929 թ. Հյուսիսային Կովկասում գոյություն ունեյին խոշոր սովորողներ 334 հազար հեկտար տարածությամբ:

1930 թ. կազմվելու յեն ևս 9 նոր հացահատիկային ֆաբրիկաներ 382 հազար հեկտար տարածությամբ: Հնդամյակի վերջում, այսինքն 1933 թվին սովորողները գրավելու յեն 1 միլիոն 550 հազար հեկտար հողեր, վորոնք այժմս չեն ոգտագործվում: 1930 թվին այդ ամբողջ հողերը հատկացվելու եյին հացահատիկային սովորողներին:

Վորոշ ռայոններում հացահատիկային ֆաբրիկաները կառուցվում են յերկաթուղային ճանապարհներից հեռու, ամայի, սակավ բնակչություն ունեցող վայրերում, ինչպես որինակ կազմակստանում: Հացահատիկային սովորողները այսուեղ ևս պետք ե հեղափոխություն առաջ բերեն, անապատները պետք ե կենդանանան: Սովորողները կյանքի յեն կանչելու միլիոնավոր հեկտար հողեր, վորոնք մինչև այդ անապատ եյին, աճելու յեն նոր հարյուր հազարավոր պլոյետարներ, վորոնք կողնեն ցրված գյուղատնտեսությունը վերակառուցելու սոցիալիստականութեն: Անապատները կկապվեն ամբողջ յերկրի հետ նոր յերկաթու-

դային և խճուղային ճանապարհներով և հաղորդակցության այլ ռւղիներով:

Խոշոր սովխոզների կառուցումը խիստ պլանով եւ առաջ տարվում: Վորոշ սովխոզներ լինելու յեն միմիայն հացահատիկային, մյուսները — անամապահական, յերրորդները — հատուկ կուլտուրաներ՝ բանջարաբուծության, այգեգործության, խաղողաբուծության, բամբակաբուծության, բրնձագործության և այլ կուլտուրաների:

Խնչու յեն մեղ պետք մեքենայացված սովխոզներ:

Որինակի համար բերենք թվեր:

Յերկու և կես միլիոն հեկտար ցանքի մշակման համար 85—90 տոկոսով մեքենայացման դեպում պահանջվում ե 15 միլիոն բանվորական և 1 ու կեսից մինչև 2 և կես միլիոն ձիան որ: Մեքենայացման բացակայության դեպում այդ մինույն տարածության մշակման համար կպահանջվի 45 միլիոն բանվորական և 50 միլիոն ձիան որ:

Հնդամյակի վերջում (1932 թ.) Զերնոտրեստը նախատեսնում ե բոլոր սովխոզների ցանքերի տարածությունը ընդարձակել 22 տոկոսով, իսկ բերքատվությունը — 35 տոկոսով: Հին և նոր սովխոզները այդ ժամանակում պետք եւ տան վոչ պակաս քան 1 և կես միլիոն տոնն (մոտ 100 միլիոն փութ) ապրանքային հացահատիկ:

Հացահատիկի մասսայական արտադրության հետ միասին, սովխոզների խնդիրների մեջ ինչպես և առաջ մանում են — լինել սոցիալիստական փարուներ գյուղատնտեսական արտադրության մեջ, հրել և ողնել բազմամիլիոն գյուղացիական բնակչությանը անցնելու հողագործության բարձր սոցիալիստական ձևերին:

Սովխոզները կազմակերպվում են վոչ թե գյուղացիական տնտեսությունները քայլքայելու, ինչպես մտածում են կուլակային բամբասանըներին լաղ առանձին գյուղացիներ, այլ գիտության և տեխնիկայի հիմունքներով նրան բարձրացնելու և համայնացնելու համար:

Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության կենտրոնական կոմիտեն լսելով Համկոմկուսի (բ) Հյուսիսային կովկասի Յերկրային կոմիտեյի գեկուցումը մեր յերկրամասի սովխոզ շինարարության մասին, վորոշեց:

«Ամեն մի սովխոզ շրջակայքի բնակչությանը արտադրական և կուլտուրական ոգնության (սերմացու, ցեղային անասուններ, բարդ մեքենաներ, ագրոգնություն, վերամշակման ձեռնարկներ և այլն) միջոցով պետք ե ձգտի իր շուրջը համախմբել կոլխոզների արտադրական-կոռպերատիվային միությունների մի ամբողջ սխտեմ»:

Այդ վորոշումներն արդեն մեր յերկրամասում մի շարք սովխոզներ կենսագործում են, վորոնց թվում նաև «Գիգանտը», «Խուտարոկը» (Արմավիրի շրջանում) և ուրիշները: Նրանք արդեն դարձել են գյուղատնտեսական հզոր կոմերինատների կենտրոններ: Սովխոզների շուրջն են համախմբվել տասնյակ խոշոր կոլխոզներ, գյուղատնտեսության բաղմաթիվ ճյուղերով:

Սա նշանակում է, վոր կուսակցությունը և խորհրդային իշխանությունը կազմակերպելով սովխոզներ, հոգ են տանում կոլեկտիվացված գյուղացիական տնտեսությունների ծաղկման մասին, գործնականում և որինակներով ցույց տալով, թե ինչպես կարելի յե ընդհանուր ուժերով ամրապնդել գյուղաանտեսությունը և փոխադրել նրան համայնական սոցիալիստական ուղիների վրա:

## ՍՊՎԽՈԶՆԵՐԻ ՃԻՆԵՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներկայումս, նախնական վոչ լրիվ տվյալների համաձայն, ԽՍՀՄ-ի զանազան ուայուններում, մարզերում և հանրապետություններում կան ավելի քան 3318 սովխոզներ: Նրանցից ՌՍՖԽՀ-ում կա 1896 հատ, Ուկրաինայում — 1071, Բելոռուսիայում — 213, Անդրկովկասում — 84, Ուզբեկստանում — 50, Թուրքմենստանում — 4:

Հյուսիսային կովկասում ներկայումս կան 150 հատ զանազան սովխոզներ և նախատեսնվում ե կազմակերպել ևս 124 նորերը:

Կոլխոզներում ընդգրկված մեր գյուղատնտեսությունը այնպես, ինչպես և արդյունաբերությունը, մոտակա տարիներում պետք ե հասնի և անցնի տեխնիկական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրներից:

Լենինյան խոսքը՝ տեխնիկա-տնտեսական տեսակետից հա-

## ԴՅՈՒՂԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆԳՈՒՄԾՐԱՑՈՒՄԸ

Մենք սեփական գյուղատեսական մեքենաներ խոշոր քանակությամբ չունենք: Մեր գործարանները չեն կարողանում բավարարել յերկրի պահանջները և չեն կարող տալ այնպիսի քանակությամբ մեքենաներ, վորպիսին մեզ պետք է այժմ: Մեր յերկիրը սովորված ե մեքենաներ բերել արտասահմանից, զիսավորապես Ամերիկայից, վճարելով նրանց մաքուր մանից, միավորական մեքենան մեզ թանգ է վորովդ: Ամեն մի գյուղատեսական մեքենան մեզ թանգ է նստում:

Վորպեսպի կախում չունենանք ուրիշ յերկրներից, մեր կառավարությունը ներկայումս արագ կերպով կառուցում ե սեփական գործարաններ, վորոնք արտադրելու յեն վոչ միայն այնպիսի մեքենաներ, վորպիսիները մենք այժմ բերում ենք Ամերիկայից, այլ և ավելի լավերը:

Ուրալում մենք ունենք յերկաթի ամբողջ սարեր: Այժմ այստեղ կառուցվում ե հսկայական մետաղամշակման գործարան Մագնիստատրոյը: Ստալինգրադում (նախկին Յարիցին) ավարտված ե գիգանտ-գործարանի, Տրակտորստարոյի կառուցումը, վորը որական բաց ե թողնելու 140 տրակտոր, իսկ տարեկան 50 հազար հատ: Այդպիսի գործարաններ կառուցվում են Չելյաբինսկում և Խարկովում:

Ռուսական տրակտորագործարանը Խարկովում ավարտվելու յե 1931 թվին: Գործարանը տարեկան բաց ե թողնելու 50 հազար տրակտոր: Սրտադրվելու յեն «կատերալիեր» սիստեմի նման տրակտորներ, 25—30 ձիու ուժի հզորությամբ:

1931—32 թվին Ռոստովում ավարտվելու յե կոմբայնների հսկայական գործարանի կառուցումը, վորը տարեկան արտադրելու յե 25 հազար հատ կոմբայն:

Ռոստովի Սելմաշտրոյ գործարանը տարեկան բաց ե թողնելու 115 միլիոն ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ: Ներկայումս վորոշված ե Ռոստովում կառուցել ավտոմոբիլների հավաքման գործարան, տարեկան 25 հազար ավտոմոբիլների արտադրողականությամբ: Բացի այդ ներկայումս մշակվում ե ՀՀ-կովկասում տրակտորային գործարան կառուցելու հարցը:

«Կարմիր Պուտիլովեց» գործարանը արդեն ներկայումս տարեկան բաց ե թողնում 30 հազար տրակտոր:

Ներ ու անցնել կապիտալիստական յերկրներից, Խորհրդային Միության աշխատավորության այդ կամքը, կոմունիստական կուսակցության և խոր. իշխանության ղեկավարության տակ սկսում ե կիրառվել կյանքում:

Խորհրդային կառավարությունն իր վորոշումներից մեկում առաջարկում ե.—«միջոցներ ձեռք առնել, վորպեսզի սովորող շինարարությունը կապված լինի կոռպերատիվ շինարարության հետ, թե կոռպերատիվ կազմակերպությունների միջոցով բնակչության արտադրանքի սպառման ասպարիզում և թե գյուղացիական տնտեսությունների արտադրական կոռպերացման ասպարիզում՝ սերմաբուծական և ցեղային սովորողների շուրջը: Ուժեղացնել սովորողների կապը գյուղացիական բնակչության հետ՝ գյուղում հասարակական-կուլտուրական աշխատանք տանելու բնագավառում: Գյուղական ժողովներում և կոնֆերենցիաներում գնել հաշվետվություններ և զեկուցումներ սովորողների աշխատանքների մասին: Սերտ կապ հասատատել սովորողների, գյուղացի-գործարանների և գյուղատնտեսական կոռպերատիվների միջև: Ուժեղացնել սովորողների կուլտուր-հասարակական դերը գյուղում»:

Այսուային աշխատանքների ժամանակ գյուղատնտեսները և կոլխոզների վարչությունները պետք ե հաճախ գյուղացիական եքսկուրսիաներ կազմակերպել դեպի սովորողները:

Այստեղ պետք ե ծանոթանան և հիշել:—ինչպիսի տրակտորներ և մեքենաներ են հարմար գործադրել կոլխոզներում և ընկերություններում, ինչպես ցաներ, հերկել հնձել, բազմացնել ազնվացեղ անասուններ և ընդհանրապես ինչպես կառուցել խոշոր մեքենայական տնտեսություն:

Վերջում անհրաժեշտ ե մատնանշել, վոր գոյություն ունեցող բոլոր սովորողների մեքենա-տրակտորային կայանները 1930 թ. ընդգրկելու ելին 681750 հեկտար գյուղացիական հողեր, 1931 թվին—1,383,750 հեկտար, 1933 թվին—1,887,750 հեկտար:

Այսպես ե սոցիալիստական շինարարության թափը գյուղատնտեսության մեջ, վորը նորմատեսնված ե հնդամյա պլանով: Բայց հնդամյակի առաջին 2 տարին արդեն ցույց տվեց, վոր կյանքը անցնում ե մեր պլանային յենթադրությունները:

27. Ա. Մեծարդի.—Խորհրդների վերընտրությունների հիմնական խնդիրները . . . . .	7 »
28. Խորհրդների վերընտրությունների գործնական խնդիրները . . . . .	8 »
29. Ամրապնդիք խորհրդները (պիտուա) . . . . .	10 »
30. Ռազմինով.—Կուլակության վերացումը և խորհրդների խն դիրները . . . . .	7 »
31. Թուառանցյան, Համատարած կոլեկտիվացման ավարտումը և 1931 թ. գարնանացանի կամպանիայի խնդիրները . . . . .	10 »
32. Խառնիով.—Բոլենիկյան յերկրորդ գաղնան մարտական խնդիր ները . . . . .	5 »
33. Ա. Առինենյան—1931 թ. գարնանացանի կամպանիայի գործ նական խնդիրները . . . . .	5 »
34. Նոր կենցաղի յերգեր . . . . .	20 »
35. Առաջ Լուսեց, —Բանատեղծություններ . . . . .	20 »
36. Լ. Զաշարյան Հայուատիկի Փաբրիկան («Գիգանտ» սովորողի մասին) . . . . .	10 »

## ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Հյուս. Կովկ., հայկ., պրոլետարողների ասոսցիացիայի անդամների գր-  
վածքները
  2. 16-րդ կուսամագումարի արդյունքները
  3. Հյուսիսային Կովկասի հնգամակը. —արդյունաբերության.
  4. Խոզաբուժության կազմակերպումը կոլխոզամ.
  5. Կերի հարցը և սիլոսացումը
  6. Կննդանաբուժյան ավագ բանվորների պարտականությունները
  7. Զեննարկ ծխախոտապործության համար.
  8. Ճագարաբուժությունն.
  9. Բոչնաբուժությունն.
  10. Աշխատանքի կազմակերպումը իմք յեկամաների բաժանումը կոլխո-  
զամ. Լավագույն կոլխոզների փորձը Հյուս. Կովկասում.
  11. Տրանսպորտը և կարսէը. տեխնիկական ձեռնարկի.
  12. Կոմսոմոլը և կռւաակցության խնդիրները.
- Դիմել՝ Ռոստօն -Դ., Բուդենովսկի պր., 60, Կրանացիզդատ,

«Ազգային գրադարան



NL0295105

15832

15881

ԳԻՆՆԵ 10 ԿՈՊ.

ЧАЩАРИН  
**ФАБРИКА ЗЕРНА**

(Совхоз «Гигант»)

На армянском языке